Հաստատում եմ

ՀՀ Լոռու մարզ <<Միխայելովկայի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

# ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ

## 2022-2023թթ.ուսումնական տարվա աշխատանքային պլան

ԴԱԿ՝ Ի.Ամիրջանյան

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորում:Դպրոցում իրականացվող յուրաքանչյուր միջոցառում սովորողների համար պետք է լինի ցանկալի ,դաստիարակող (ծննդյան օրեր,հանդեսներ, տոնական օրեր ,ընթերցումներ ,սպորտային միջոցառումներ , բանավեճեր և այլն):Դպրոցում ստեղծում ենք աշակերտական խորհուրդներ ,որոնք կմասնակցեն կազմակերպվող բոլոր միջոցառումների նախապատրաստմանը և անցկացմանը:

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Օգտվել ժողովրդավարական հարաբերություններից, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները կառուցել գործընթացային հիմքի վրա, բարելավել դասի դաստիարակչական կողմը:
2. Ձևավորել աշակերտների ինքնաճանաչողության, ինքնակառավարման, ինքնուրույն գործելու, վերլուծական մտածողության, անսովոր պայմաններում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ և պատասխանատու վարք:
3. Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, հայրենասիրության, հումանիզմի, հանդուրժողականության հիմքի վրա նպաստել երեխաների արժեքաին համակարգի կազմավորմանը:
4. Պայմաններ ստեղծել երեխաների ճանաչողական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների (արտադասարանական աշխատանք, արտադպրոցական հաստատություններ) գործունեության համար:

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դասղեկների հետ տարվող աշխատանք:
2. Համադպրոցական և արտադպրոցական միջոցառումների պլանավորում և կազմակերպում:
3. Արտադասարանական խմբակների աշխատանքների կազմակերպում և վերահսկում:

4. Դպրոցի կարգապահական, դաստիարակչական, ընդհանուր աշխատանքների կազմակերպում և վերահսկում:
5. Աշխատանքներ երեխաների տարբեր խմբերի հետ (սոցիալապես անապահով, ծնողազուրկ, վարքի շեղում ունեցող, շնորհալի երեխաներ ):
6. Աշխատանք աշակերտական խորհրդի հետ:
7. Գրադարանի հետ տարվող աշխատանք:
8. Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանք:

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1. Անցկացնել դասարանական ընդհանուր ժողովներ և ընտրել դասարանական խորհուրդներ: | սեպտեմբերի 6-8-ը | Ի. Ամիրջանյան | |
| 2. 6-12- րդ դասարանների ներկայացուցիչներից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրել աշակերտական խորհուրդ:<br>Ընտրել աշակերտական խորհրդի նախագահ: | Սեպտեմբերի 10-15-ը | | |
| 3. Հաստատել աշակերտական խորհրդի 2022– 2023 ուս .տարվա պլանը: | Սեպտեմբերի 12-ին | | |
| 4. Օգնել աշակերտական խորհրդին ուսումնդաստիարակչական,սոցիալական մշակութային, տեղեկատվական հանձնախմբեր ստեղծելու, նրանց գործունեությունը կազմակերպելու ուղղությամբ: | | | |
| 5. Կազմակերպել արտադասարանական աշխատանքի գծով ակտիվի ստեղծում: | Ուստարվա ընթացքում | | |
| 6. Լսել հաշվետվություններ հանձնախմբերի կատարած աշխատանքների մասին և օգնել տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ: | Ուստարվա ընթացքում | | |

## Դպրոցի կարգապահական, դաստիարակչական, ընդհանուր աշխատանքների կազմակերպում և վերահսկում:

| Հ. | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1. | Աշխատանք կատարել սովորողների վարքի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցել դպրոցական ինքնավարությանը, համապատասխան ուղեցույցի կանոնների՝<br>• ձեռքերի ախտահանում: | Ուստարվա ընթացքում | Ի.Ամիրջանյան | |
| 2 | Կազմակերպել միջոցառումներ նվիրված տոնականն հիշարժան օրերին: | Ուստարվա Ընթացքում | | |
| 3 | Անհատական աշխատանքներ կազմակերպել շնորհալի, ստեղծագործող աշակերտների հետ մասնակից դարձնելով ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին: | Ուստարվա Ընթացքում | | |
| 4 | Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնակել սոցիալապես անապահով երեխաններին օգնություն ցուցաբերելու համար: | Ուստարվա Ընթացքում | | |

# Աշակերտների արժեքային համակարգի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանք

| Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|
| 1.Բարձր դասարանի աշակերտներին բացատրել մարդկային բարոյական ու հոգևոր արժեքները,արժևորել պատմական անցյալի և ապագայի դերը աշակերտների բարոյական հատկանիշների ձևավորման գործում:<br><br>2.Բացատրել անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթացը, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար.<br><br>2.Աշակերտների մոտ առաջացնել հետաքրքրություն իրենց անձի նկատմամբ, և կատարելագործման ցանկություն:<br><br>3.Զարգացնել աշակերտների կամային հատկանիշները, ձևավորել սեփական անձի թույլ կողմերի նկատմամբ քննադատական մտածողություն:<br><br>4.Կազմակերպել էքսկուրսիաներ և ծանոթացնել աշակերտներին ազգային ավանդույթներին, հոգևոր արժեքներին: Քաղաքացիական , հայրենասիրական , հումանիստական գաղափարներ սերմանել նրանց մեջ: | Տարվա ընթացքում<br><br>ուստարվա ընթացքում<br><br>ուստարվա ընթացքում<br><br>ընթացքում<br><br>ուստարվա ընթացքում | Ի.Ամիրջանյան<br><br>դասղեկներ<br><br>դասղեկներ<br><br>դասղեկներ<br><br>դասվարներ դասղեկներ | |

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| h. | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանա-տու | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Համագործակցելն վերահսկել դպրոցի ամբուլատորիայի բուժքրոջ հետ՝ հակահամաճարակային կանոնների պահպանման,աշակերտների ֆիզիկական և առողջական վիճակը ուսումնասիրելու համար և լինել հետևողական: | յուրաք. ամիս<br>ուստարվա ընթացքում | Ի.Ամիրջանյան | |
| 3. | Սովորեցնել ՝ ի՞նչ է առողջ ապրելակերպը, երեխաների մոտ ճիշտ վերաբերմունք ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և սպորտի նկատմամբ: | ընթացքում | | |
| 4. | Ուսումնական գործընթացում ուսումնասիրել աշակերտների ծանրաբեռնվածությունը: | ընթացքում | | |
| 5. | Անցկացնել զրույցներ սանիտարահի-գիենիկ պահանջների, անձնական հիգիենայի վերաբերյալ, աշակերտներին բացատրել ալկոհոլի նիկոտինի, թմրանյութերի, ՁԻԱՀ-ի հետևանքները մարդու օրգանիզմի վրա: | ընթացքում | | |
| 6. | Համագործակցել արտադպրոցական հաստատությունների հետ՝ մանկա - կան հիվանդությունների կանխարգել ման նպատակով: | ընթացքում | | |
| 7. | Կազմակերպել մրցույթներ, սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ: | ուստարվա ընթացքում | | |
| | Մաքուր պահել շրջապատը,դպրոցը, քաղաքը: | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 1.Ծնողական խորհրդի հետ համատեղ կազմակերպել սովորողների կենցաղային պայմանների ուսումնասիրություններ, հետևել սովորողների արտաքին տեսքին և անձնական հիգիենային:<br><br>2.Դասարանների ծնողական խորհուրդների հետ համատեղ ճշտել սոցիալապես ապահով ,միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ , բազմանդամ ընտանիքների երեխաների ցուցակները նհամապատասխան աշխատանք տանել նրանց օգնելու ուղղությամբ:<br><br>3. Ապահովել ծնողների ակտիվ մասնակցությունը բազմաբնույթ միջոցառումներին: | տարվա ընթացքում<br><br>սեպտեմբեր<br><br>տարվա ընթացքում | Դասղեկներ<br><br>Մ.Մկրտչյան<br><br>Ի.Ամիրջանյան | |
| 4.Նպատակային օգտագործել ծնողական համայնքի ուժերը սովորողների հիմնական պարտադիր կրթության իրականացման ուղղությամբ: | տարվա ընթացքում | Դասղեկներ<br><br>Մ.Մկրտչյան<br>Ի.Ամիրջանյան | |

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| Աշխատանքի բովանդականությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|
| 1. 2022-2023ուստարվա սկիզբը ազդարարող «Գիտելիքի օր» միջոցառման կազմակերպում և առաջին դասարանցիների ընդունելության հանդիսավոր արարողություն: | սեպտեմբերի 1 | Դասվար Ի.Ամիրջանյան | |
| 2.Կազմակերպել «Անկախության » խորագրով միջոցառում: | Սեպտեմբերի 21 | Ի.Ամիրջանյան Ուսուցիչներ Դասղեկներ Դասվար | |
| 3.Կազմակերպել նկարչության մրցույթ և պորտալանդիա նվիրված այաստանիանկախության օրվան | Սեպտեմբեր ամսվա ընթացքում | Ֆիզ.դաս.ուսուցիչ | |
| 4.Դպրոցի շենքն ու գույքը պահպանելու նպատակով զրույցներ անցկացնել աշակերտների հետ «Դպրոցը մեր տունն է, այստեղ մենք տանն ենք» թեմայով: | հոկտեմբեր ամսվա ընթացքում | ԴԱԿ,դասղեկներ | |
| 5 .ՈՒսուցչի տոնին նվիրված միջոցառում: | Հոկտեմբերի 5 | | |
| 6. Կազմակերպել հանդիպումներ իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ: | տարվա ընթացքում | | |
| 7.<<Ոսկե աշուն>>համադպրոցական միջոցառում: | Հոկտեմբեր-նոյեմբեր | ԴԱԿ,դասղեկներ | |

| | | | |
|---|---|---|---|
| 8. Հարիսայի օր | նոյեմբեր | ԴԱԿ ,դասղեկներ | |
| 9. Կազմակերպել հանրօգուտ աշխատ.-ներ՝ դասարանի կահավորում, շա-բաթօրյակ: | տարվա ընթացքում | Տնօրեն ԴԱԿ,դասղեկներ | |
| 10. Աշակերտական խորհրդի նիստեր: | տարվա ընթացքում | ԴԱԿ | |
| 11. Սանիտարահիգենիկ պայմանների պահպանման իրականացում : | տարվա ընթացքում | ԴԱԿ,դասղեկներ | |
| 12. Ամենօրյա հաճախումների ստուգում,անհարգելի բացակայությունների կանխում: | տարվա ընթացքում | ԴԱԿ,դասղեկներ | |
| 13. Կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձաններին ծանոթանալու համար: | տարվա ընթացքում | | |
| 14.1. Երկրաշարժի զոհերի հիշատակման օր:<br>2. Ամանորյա միջոցառումների կազմակերպում և անցկացում: | դեկտեմբերի 7<br>դեկտեմբեր | ԴԱԿ,դասղեկներ<br>Դասղեկներ | |
| 15. Այցելություն մշակութային կենտրոններ | ուստարվա ընթացքում | | |
| 16. Հայոց բանակին նվիրված միջոցառման կազմակերպում | հունվար | ԴԱԿ դասղեկներ | |
| 17. 1.Տյառն ընդառաջ<br>2.Գիրք նվիրելու օրվան նվիրված միջոցառում, | փետրվար 13<br>փետրվար 19 | ԴԱԿ<br>Դասղեկներ,գրադարանավար | |

| | | | |
|---|---|---|---|
| :<br><br>18. Կազմակերպել գրական-երաժշտական ցերեկույթներ ՝ նվիրված կանանց միջազգային տոնին և մայրության ու գեղեցկության օրվան: | Մարտ-ապրիլ | ԴԱԿ<br>Դասղեկներ | |
| 19. Եղեռնի զոհերի Հիշատակման օր | Ապրիլ 24 | ԴԱԿ<br>Դասղեկներ | |
| 20. Սուրբ Հարության տոն | ապրիլ | Հեպ,<br>ուսուցչուհի<br>ԴԱԿ,դասղեկ | |
| 21. Հաղթանակների և խաղաղության տոն | մայիս | | |
| 22. ՀՀ առաջին հանրապետության տոն | մայիս 28 | | |
| 23. Վերջին դաս | մայիս | ԴԱԿ,դասղեկ | |